ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ------ 2025թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ
ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի 2022 թվականի բյուջեի «Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում» ծրագրով ձեռք բերված, 59,349,999.88 (հիսունիննը միլիոն երեք հարյուր քառասունիննը հազար ինը հարյուր ինսունիննը հազար դրամ ութսունութ լումա) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 33 հատ կանգառասրահները սեփականության իրավունքով օտարել (նվիրել) «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությանը՝ համաձայն հավելվածի:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագիծը նպատակ ունի կարգավորել Երևան քաղաքում տեղադրված կանգառասրահների սպասարկումը և պահպանումը: Կանգառասրահների պատշաճ շահագործումը և պահպանման բարելավումը կարևոր նշանակություն ունեն քաղաքային տրանսպորտային համակարգի կայուն զարգացման համար: Կանգառասարհների նվիրատվությունը հնարավորություն կտա ապահովել քաղաքային կանգառների շարունակական վերահսկողությունն ու վերանորոգումը, բարելավել սպասարկման որակը: Բացի այդ, որոշումը կնպաստի Երևանի բնակիչների և քաղաքի այցելուների տրանսպորտային պայմանների բարելավմանը՝ ապահովելով ավելի հարմարավետ սպասարկման միջավայր: Կանգառասրահների նվիրատվությունը «Երևանտրանս» ՓԲԸ-ին կապահովի դրանց պատշաճ սպասարկումը, ինչը կբարձրացնի քաղաքային տրանսպորտից օգտվող քաղաքացիների հարմարավետությունը և անվտանգությունը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել «Գույքի նվիրատվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2025 թվականի մարտի____-ի
N ____-Ա որոշման

ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

1. Լենինգրադյան 2շ. Մոտ
2. Լենինգրադյան /ՄՀՀ-ի կողմ/
3. Լենինգրադյան 34շ. ուղղությամբ հանդիպակաց մայթ
4. Լենինգրադյան 42շ. Մոտ
5. Լենինգրադյան 50շ. Մոտ
6. Լենինգրադյան 50շ. ուղղությամբ հանդիպակաց մայթ
7. Սեբաստիա փող. /Ազատամարտիկների այգու մուտք/
8. Սեբաստիա փող. /Ազատամարտիկների այգու մուտք/ դիմացի մայթ
9. Հասրաթյան փող. 16շ. Մոտ
10. Հասրաթյան փող. /Զորամասի դիմաց/
11. Հասրաթյան փող. /Շանթ գործարանի ուղղությամբ/
12. Շիրազի փող. /վերգետնյա անցումի մոտ/
13. Շիրազի փող. 20 /Երևան Սիթի/
14. Շիրազի փող. /Մեծ Անիվի մոտ/
15. Հալաբյան փող. /ԵՐՖԻ-ի մոտ/
16. Մազմանյան փող. 2շ. Մոտ
17. Մազմանյան փող. /Գարաժ Մոլի մոտ/
18. Բեկնազարյան փող. /Նորաշեն 38շ. ուղղությամբ
19. Մելքումով փող. /11շ. Մոտ/
20. Մելքումով փող. /Նորաշեն 20շ. ուղղությամբ
21. Մարգարյան փող. 15շ. Մոտ
22. Մարգարյան փող. /Հագուստի աշխարհի մոտ/
23. Մարգարյան փող. 12շ. Մոտ
24. Մարգարյան փող. 43շ. Մոտ
25. Բաշինջաղյան փող. 187շ. ուղղությամբ
26. Շինարարների փող. 22շ. ուղղությամբ
27. Շինարարների փող. 15շ. Մոտ
28. Շինարարների փող. 8շ. ուղղությամբ
29. Շինարարների փող. 4շ. ուղղությամբ
30. Նազարբեկյան թաղամաս /ծառուղի, 11 շենքի ուղղությամբ/
31. Մարտիրոսյան փող. Վերջնամաս /Հասրաթյան 16 շենքի ուղղությամբ/
32. Մարտիրոսյան փող. Վերջնամաս /Հասրաթյան 14 շենքի ուղղությամբ/
33. Շինարարների փողոց 25 շենքի ուղղությամբ